ՏԵՂԵԿԱՆՔ

«ՎԱՐԴԱՆՅԱՆ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ն (Պետական գրանցման համար՝ 264.110.941070, ՀՎՀՀ՝ 00161726, գրանցման ամսաթիվ՝11.01.2017 թ.) մասնագիտացած է միգրացիայի ոլորտում իրավաբանական ծառայությունների մատուցման մեջ:

Վերջին երկու տարիներին մեր գրասենյակը շարունակել է իր աշխատանքը՝ օտարերկրացիների շահերի պաշտպանությունը և միգրացիոն իրավունքի ոլորտում որակյալ ծառայությունների մատուցումը:

1. Օտարերկրացիների իրավունքների պաշտպանություն և աջակցություն

- Աջակցել ենք բազմաթիվ օտարերկրացիների կացության կարգավիճակ կամ քաղաքացիություն ձեռք բերելու գործընթացներում, ինչպես նաև օժանդակ ծառայություններ, ինչպիսիք են՝
- ՀՀ մուտքի վիզայի և հրավերի տրամադրման դիմումների ներկայացում և հարակից գործընթացների կազմակերպում,
- ՀՀ-ում հասցեի հաշվառում (հաշվառման գործընթաց),
- ՀՀ-ում սոցիալական ծառայությունների համարանիշի (ՀԾՀ) ստացում,
- ՀՀ-ում մշտական բնակության տեղեկանքի ստացում,
- Ֆիզիկական անձի համար հարկ վճարողի հաշվառման համարի (ՀՎՀՀ) ստացում:
- Ներկայացրել ենք հաճախորդների շահերը ոչ միայն վարչական մարմիններում, այլև դատական ատյաններում:
- Խորությամբ ուսումնասիրել ենք հաճախորդների խնդիրները և առաջարկել համապարփակ լուծումներ՝ ներառյալ իրավական խորհրդատվություն, փաստաթղթերի նախապատրաստում և վարչական գործընթացներում ներկայացուցչություն:

2. Աշխատանք պետական գերատեսչությունների հետ

- Աշխատել ենք Միգրացիայի և քաղաքացիության ծառայության և մի շարք այլ պետական մարմինների հետ, ներառյալ՝
- Արտաքին գործերի նախարարություն
- Պետական եկամուտների կոմիտե
- Պաշտպանության նախարարություն
- Ազգային անվտանգության ծառայություն
- Քաղաքացիական ակտերի գրանցման գործակալություն

3. Օրենսդրության մշտադիտարկում և բարեփոխումների առաջարկներ

- Հետևել ենք միգրացիոն օրենսդրության մեջ կատարվող փոփոխություններին՝ հասկանալու դրանց ազդեցությունը ինչպես օտարերկրացիների, այնպես էլ երկրի շահերի վրա:
- Ներկայացրել ենք պրակտիկ առաջարկություններ միգրացիայի ոլորտում օրենսդրական նախաձեռնությունների վերաբերյալ :

4. Միջազգային փորձի ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն

- Աշխատել ենք միջազգային միգրացիոն իրավունքի մասնագետների հետ, համեմատել ենք Հայաստանի միգրացիոն համակարգը այլ երկրների լավագույն փորձի հետ:

5. Մասնագիտական գիտելիքների տարածում

- Նպաստել ենք օտարերկրացիների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը՝ տեղեկատվություն տարածելով մեր կայքում նոր հրապարակումների միջոցով:

6. Համագործակցություն հաճախորդների լայն շրջանակի հետ

- Աշխատել ենք ինչպես հայազգի, այնպես էլ օտարազգի հաճախորդների հետ՝ ներառելով գործարարներ, աշխատողներ, ուսանողներ և այլ խմբեր:

Վերջին երկու տարիների ընթացքում մեր գործունեությունը վկայում է մեր նվիրվածության մասին՝ նպաստելու միգրացիոն ոլորտի զարգացմանը: